ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՌԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1923-1927ԹԹ.)*

ՀՏԴ 93/94(479.25)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ԱԵԳՄՄ անդամ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
grigorbalasanyan@mail.ru

Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունները մեծապես նպաստեցին Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (այսուհետ՝ ՀՍԽՀ) տնտեսության զարգացմանը, ինչն իր հերթին դրական ազդեցություն ունեցավ հանրապետության ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդային հանրապետություններից հատկապես ակտիվ էին Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (այսուհետ՝ ՌՍԴԽՀ) հետ Խորհրդային Հայաստանի առևտրական կապերը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունների ջանքերը՝ ուղղված հայ-ռուսական առևտրատնտեսական առնչությունների զարգացմանը, հիմնականում պսակվեցին հաջողությամբ: Այդ գործում անուրանալի դերակատարում ունեցավ Հայառը, որի բաժանմունքները ողջ Ռուսաստանի տարածքում օրնիբուն տքնաջան աշխատում էին՝ Հայաստանը առաջին հերթին հացահատիկով և այլ անհրաժեշտ ապրանքներով ապահովելու համար: Այդ գործում ակտիվ մասնակցություն ունեցավ նաև ՌՍԴԽՀ-ում Խորհրդային Հայաստանի լիակոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը, որ մեծ հեղինակություն ուներ ռուսաստանյան կառավարող շրջանակներում և մեծապես նպաստում էր այս կամ այն հարցը օպերատիվ կերպով կարգավորելուն:

Բանալի բառեր՝ *ՀՍԽՀ, ՌՍԴԽՀ, Մոսկվա, Սահակ Տեր-Գաբրիելյան, Հայառ, առևտրատնտեսական հարաբերություններ, բաժանմունք, հացահատիկ:*

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակների ընտրությունը պատահական չէ: 1923թ.-ը պայմանավորված է ԽՍՀՄ-ին Խորհրդային Հայաստանի անդամակցության առաջին տարով, իսկ 1927թ.-ը պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 1927թ.-ը Անդրկովկասում գոյություն ուներ արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ, իսկ «1927թ. այն վերածվում է ԽՍՀՄ արտաքին առևտրի անդրկովկասյան լիազորության՝ երկրամասի մնացած ժողկոմատներին հավասար իրավունքներով»[593]:

* Հոդվածը ներկայացվել է 30.04.2019թ., գրախոսվել՝ 07.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

[593] **Գրաբսկի Հ.**, Անդրկովկասի արտաքին առևտրական կապերի զարգացումը Անդրֆեդերացիայի ժամանակ (1922-1936թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, 1968, էջ 62:

1921թ.-ի դեկտեմբերի վերջերից Ս.Տեր-Գաբրիելյանը ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչն էր Մոսկվայում[594]: Խորհրդային Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնելուց հետո էլ նա շարունակում է պաշտոնավարել՝ միաժամանակ մնալով նաև ՀՍԽՀ Տնտեսական խորհրդի ներկայացուցիչը Մոսկվայում: Ս. Տեր-Գաբրիելյանը աչքի էր ընկնում աշխատասիրությամբ, եռանդուն գործունեությամբ, սկսած գործն ավարտին հասցնելու վճռականությամբ: Միաժամանակ իր գործունեությամբ նա չափազանց խիստ էր, ինչն ուղղված էր ընդհանուր գործի հաջողության ապահովմանը: 1923թ.-ի հունվարին Ս.Տեր-Գաբրիելյանը կանոնակարգ է ուղարկում ՌԽՖՍՀ տարբեր շրջաններում ՀՍԽՀ Տնտեսական խորհրդի ներկայացուցչությունների ղեկավարներին: Կանոնակարգը բաղկացած էր ութ կետից, որոնցում նշված էին այն հիմնական սկզբունքները, որոնց պետք է հետևեին բոլորը գործունեություն ծավալելիս[595]:

1923թ.-ի հունվարի 3-ին Սահակ Տեր-Գաբրիելյանը 9 կետից բաղկացած լիազորագիր է տալիս Գուրգեն Աթաբեկովին առ այն, որ նա Ս.Տեր-Գաբրիելյանի կողմից նշանակվում է Ստավրոպոլում որպես իր ներկայացուցիչ: Աթաբեկյանն իրավունք էր ստանում Տնտեսական խորհրդի անունից Ստավրոպոլում բացել առևտրական գրասենյակ, ունենալ պահեստներ, աշխատանքի ընդունել ու ազատել աշխատողների[596]:

Բացի այդ 3 ամիս ժամկետով՝ մինչև մայիսի 1-ը, Ս.Տեր-Գաբրիելյանը լիազորագիր է տալիս մեկ այլ քաղաքացու՝ Եղիազար Եղիազարյանին առ այն, որ նա իրավունք է ստանում վարելու ՀՍԽՀ տնտեսական ու առևտրական գործերը ՌԽՖՍՀ ողջ տարածքում: Նա իրավունք էր ստանում պետական հիմնարկ-ձեռնարկությունների ու անհատների հետ կնքել տարատեսակ պայմանագրեր ու համաձայնագրեր, բացել ու փակել առևտրական գրասենյակներ, կանխիկ ու ապառիկ կերպով առևտուր իրականացնել, ձեռք բերել ու վարձակալել ձեռնարկություններ և այլն [597]:

Եղիազարյանը ջանասիրությամբ գործի է անցնում և կարճ ժամանակ անց՝ 1923թ.-ի փետրվարի 6-ին, «Նովոռոսցեմենտի» մոսկովյան ներկայացուցիչ Սերգեյ Ուսպենսկու հետ ցեմենտի գնման վերաբերյալ պայմանագիր է ստորագրում, որը բաղկացած էր16 կետից: Պայմանագրով հայկական կողմը գնում էր 10.000 տակառ (100.000 փութ) պոռտլանդ ցեմենտ, որի մեկ տակառ ցորենի գինը սահմանվում էր 4 ռուբլի ոսկով: Պայմանագիրը կազմվում էր 2 օրինակից. բնօրինակը գտնվելու էր ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունում, իսկ կրկնօրինակը՝ Սերգեյ Ուսպենսկու ձեռքին[598]:

Տնտեսական խորհրդից բացի ՌԽՖՍՀ տարբեր շրջաններում ու նահանգներում ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Հայպետառը[599], որը Տնտեսական խորհրդին զուգահեռ ամեն ջանք գործադրում էր Խորհրդային Հայաստանը հացահատիկով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար:

Դեռևս 1922թ.-ի դեկտեմբերի 29-ին Հայառի Վարչությունը լիազորագրով Սահակ Տեր-Գաբրիելյանին նշանակում է այդ պաշտոնում: Նրա նշանակումով պարզ էր դառնում, որ ամենից ակտիվը պետք է լիներ հենց Մոսկվայի գրասենյակը, քանի որ գտնվելու էր Տեր-Գաբրիելյանի ամենօրյա հսկողության տակ: Ստանալով լիազորագիրը և համապատասխան վկայականը՝ Տեր-Գաբրիելյանը գործի է անցնում և արդեն մի քանի օր հետո՝ 1923թ.-ի հունվարի 10-ին, նրա հետ կապ է հաստատում ռուսական «Մետալլամպ» գործարանի տնօրենը՝ առաջարկելով համագործակցել: Իր նամակում տնօրենը ներկայացնում է այն ամբողջ ապրանքատեսականին, որ արտադրվում է

[594] Այդ մասին տե՛ս **Բալասանյան Գ.,** Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության առևտրատնտեսական գործունեության պատմությունից, «Բանբեր Երևանի Համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 131.6, Ե., 2010:

[595] Տե՛ս ՀԱԱ, ֆ.554, ց.1, գ. 24, թ.1:

[596] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1ա, գ. 4, թ. 13:

[597] Տե՛ս նույն տեղը, թ. 32:

[598] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1ա, գ. 5, թ. 3-4:

[599] Հայպետառը 1923թ.-ի փետրվարի 10-ին վերանվանվում է Հայառ:

իրենց գործարանում, բացի այդ նշում է, որ քանի որ իրենց գործարանը պետական է, ապա առաջին հերթին իրենք կատարում են պետական հաստատությունների պատվերները: Վերջում տնօրենը Տեր-Գաբրիելյանին խնդրում է անհրաժեշտության դեպքում կապվել իրենց հետ՝ տեղում նմուշներին ծանոթանալու համար[600]:

Հայպետառի բաժանմունքներից ակտիվությամբ աչքի էր ընկնում Ստավրոպոլի երկրամասի բաժանմունքը, որի ղեկավարը 1923թ.-ի սեպտեմբերից նոյեմբեր ամիսներին Ավագյանն էր: Ստավրոպոլի բաժանմունքի գրասենյակը գտնվում էր Արմավիր քաղաքում՝ «Ֆրանսիա» հյուրանոցում: Ավագյանն ակտիվ աշխատանք էր տանում Ստավրոպոլի երկրամասում հատկապես ցորեն ու ալյուր ձեռք բերելու և այն երկաթուղիով Երևան ուղարկելու համար: Այդ գործն իրականացնելու համար Ստավրոպոլի բաժանմունքը պատվեր էր ստացել ՀՍԽՀ Պետբանկից, սակայն գործի իրականացման համար մեծ խոչընդոտ էր երկաթգծի կայարանում վագոնների սակավությունը և ՀՍԽՀ Պետբանկի կողմից հատկացվող միջոցների սղությունը:

Հայպետառի Ստավրոպոլի բաժանմունքի ղեկավարության ակտիվ գործողություններից հետո սայլը տեղից շարժվում է: Նրանց հաջողվում է որոշ քանակությամբ հացահատիկ հանձնել երկաթուղուն՝ Երևան ուղարկելու համար: Այդ մասին հոկտեմբերի 4-ին ՀՍԽՀ Պետբանկին ուղարկած իր հեռագրում հայտնում է Մկրտիչևը՝ նշելով, որ մինչև հոկտեմբերի 1-ն իրենց հաջողվել է երկաթուղուն հանձնել 20.000 փութ հացահատիկ: Մկրտիչևը հայտնում է նաև, որ հոկտեմբերի 4-ին կոոպերատիվների միջոցով իրենց հաջողվել է 1 փութը 72 կոպեկով ձեռք բերել ևս 25.000 փութ հացահատիկ[601]: Նոր ձեռք բերված հացահատիկի մասին հայտնվում է նաև Հայառի Մոսկվայի բաժանմունքին [602]:

Հացահատիկի ձեռքբերման և Հայաստան ուղարկելու աշխատանքները հաջողությամբ շարունակվում են նաև հոկտեմբերի վերջին և նոյեմբեր ամսվա առաջին կեսին: Հաճախ օգտագործելով նաև անձնական կապերը՝ Հայառի Ստավրոպոլի բաժանմունքի ղեկավարներին հաջողվում էր ցորեն ու ալյուր ձեռք բերել շուկայականից ցածր գներով:

ՀՍԽՀ Պետբակի կողմից սահմանափակ դրամական միջոցների տրամադրումը մեծապես ազդում էր դեպի Հայաստան հացահատիկի առաքման ծավալների վրա: Բացի այդ այն կազմակերպություններն ու կոոպերատիվները, որոնցից Հայառի Ստավրոպոլի բաժանմունքը հացահատիկ էր գնում, այլևս հրաժարվում էին առանց կանխիկ գումարի ցորեն տրամադրել: Այդ մասին նոյեմբերի 2-ին Ավագյանին հղած հեռագրում հայտնում էր Մկրտիչևը: Ըստ նրա՝ ցորենի գնումն ընդհանրապես դադարեցված էր գումարի բացակայության պատճառով: Բացի այդ, գումարը չէր բավականացնում նույնիսկ նախորդ պայմանագրերի վճարման համար[603] :

ՌԽՖՍՀ տարբեր շրջաններում գործող Հայառի բաժանմունքներն իրենց գործունեության վերաբերյալ ժամանակ առ ժամանակ պետք է հաշվետվություն ներկայացնեին նահանգային տարբեր մարմիններին: Նոյեմբերի 2-ին Մկրտիչևը հեռագրում է հացահատիկի գների կարգավորման նահանգային հանձնաժողովին և հայտնում, որ մինչև 1923թ.-ի հոկտեմբերի 10-ն իրենց կողմից ձեռք է բերվել 18.628 փութ հացահատիկ[604] :

Հայառի բաժանմունքները բավականին լարված հարաբերությունների մեջ էին հատկապես նահանգային ֆինանսական բաժինների հետ, որոնք պահանջում էին բաժանմունքների ֆինանսական միջոցների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ: Չնայած բաժանմունքների ղեկավարները փորձում էին նրանց

[600] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1ա, գ. 5, թ. 34:
[601] Նույն տեղը, թ. 25:
[602] Նույն տեղը, թ. 26:
[603] Նույն տեղը, թ. 90:
[604] Նույն տեղը, թ. 92:

համոզել, որ իրենք ՀՍԽՀ Տնտխորհի մարմին չեն հանդիսանում, և իրենց նպատակը սովյալ Հայաստանի համար հացահատիկ հայթայթելն է, այնուամենայնիվ, որոշ բաժանմունքներ, չդիմանալով ճնշմանը, ստիպված դադարեցնում էին գործունեությունը:

Նոյեմբերի 10-ին Հայառի Ստավրոպոլի բաժանմունքի ղեկավար Ավագյանը ղեկավարի պարտականությունները թողնում է իր տեղակալ Մկրտիչևի վրա, իսկ ինքը տեղափոխվում է Թիֆլիս: Մկրտիչևը նոյեմբերի 13-ին հեռագրում է Հայառի Մոսկվայի բաժանմունք՝ խնդրելով թույլատրել իրեն սկսել Ստավրոպոլի բաժանմունքի լուծարման աշխատանքները և համաձայնության դեպքում պատրաստակամություն է հայտնում այն ավարտել մինչև դեկտեմբերի 1-ը: 3 օր հետո, ամենայն հավանականությամբ, Մկրտիչևը ստանում է Մոսկվայի բաժանմունքի համաձայնությունը: Այդ մասին նոյեմբերի 16-ին նա հեռագրում է Մոսկվայում ՀՍԽՀ Տնտխորհի տնտեսական գրասենյակի վարիչ Ն.Ա.Մելիք-Փարսադանովին, որ նստում էր Արմավիրում[605]: Նոյեմբերի 24-ին Մկրտիչևը Ստավրոպոլի բաժանմունքի փակման ծրագրի մասին հեռագրով տեղյակ է պահում Ստավրոպոլի երկրամասի ֆինբաժնին: Նշվում է նաև, որ բաժանմունքը նախատեսվում է փակել դեկտեմբերի 5-ին կամ ամենաուշը դեկտեմբերի 10-ին[606]:

Հայառը բաժանմունք ուներ նաև Սիբիրում, որի ղեկավարն էր Գևորգ Ավետիսովը: 1923թ.-ի մարտի 29-ին նրա ու քաղաքացի Մամիկոն Քարդաշյանցի միջև պայմանագիր է ստորագրվում, ըստ որի՝ Քարդաշյանցը նշանակվում էր Սիբիրի բաժանմունքի Իրկուտսկի առևտրային բաժնի ղեկավարը: Պայմանագիրը բաղկացած էր 10 կետից, որոնցում շարադրված էին Քարդաշյանցի պարտականությունները: Նույն օրը այն հաստատվում է Ս.Տեր-Գաբրիելյանի կողմից[607], և նա Քարդաշյանցին հանձնում է համապատասխան մանդատ[608] :

Խորհրդային Ռուսաստանի տարբեր նահանգների տեղական իշխանությունների հետ լարված հարաբերությունները մի փոքր բարելավելու և գործը նորմալ հունով տանելու համար Հայառի Վարչությունը որոշում է Հայառի ռուսաստանյան բոլոր բաժանմունքների տնօրեն նշանակել Ս.Տեր-Գաբրիելյանին, որ մեծ փորձ ուներ ռուս պաշտոնյաների հետ աշխատելու գործում:

Տեսնելով, որ Հայառի բաժանմունքներից ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկություններ ստանալ չի հաջողվում, ռուսական իշխանությունները առաջ են քաշում ՌԽՖՍՀ տարածքում Հայառի գործունեության իրավական հիմնավորման հարցը:

1923թ.-ի դեկտեմբերի 8-ին ՌԽՖՍՀ Ներքին Առևտրի կոմիտեն գրություն է ուղարկում Մոսկվայում Հայառի ներկայացուցչություն՝ խնդրելով ներկայացնել այն հիմքերը, որոնցով Հայառը գործարքներ էր իրականացնում ԽՍՀՄ տարածքում, մասնավորապես Մոսկվայում: Գրության մեջ խնդրվում էր իրենց տրամադրել նաև Հայառի կանոնադրությունը[609]: Այդ գրության մասին Մոսկվայի բաժանմունքը 1924թ.-ի հունվարի 8-ին հեռագրում է Երևան՝ Հայառի Վարչությանը: Հեռագրում հայտնվում էր, որ ՌԽՖՍՀ Ներքին Առևտրի կոմիտեի առարկությունների հիմքն այն է, որ Հայառի կանոնադրության 49-րդ հոդվածի համաձայն կանոնադրության մեջ ցանկացած փոփոխություն պետք է հաստատվեր ՀՍԽՀ Տնտեսական խորհրդի կողմից, ինչը չէր արվել: Իսկ այդ փոփոխությունները երեքն էին՝ Ժողկոմխորհին կից Տնտեսական խորհրդի որոշմամբ (1923թ. փետրվարի 19) Հայառի հիմնական դրամագլուխը 400.000 ոսկե ռուբլուց իջեցվել էր մինչև 220.000 ռուբլի, և դրանով փոփոխվել էր

[605] Նույն տեղը, թ. 165:
[606] Նույն տեղը, թ. 205:
[607] Նույն տեղը, գ. 28, թ. 61:
[608] Նույն տեղը, թ. 60:
[609] Տե՛ս նույն տեղը, թ.32:

Կանոնադրության 15-րդ հոդվածը, Տնտեսական խորհրդի 1924թ.-ի հունվարի 2-ի որոշմամբ Հայառի Վարչության կազմը 5-ից դարձել էր 7 մարդ, ինչով խախտվել էր Կանոնադրության 29-րդ հոդվածը և նույն օրվա որոշմամբ Հայպետառը վերանվանվել էր Հայառ[610] :

ՌԽՖՍՀ Ներքին Առևտրի կոմիտեի դեկտեմբերի 8-ի գրությանը Հայառի Մոսկվայի բաժանմունքը պատասխանում է դեկտեմբերի 14-ին: Այդ օրը բաժանմունքի ղեկավարի պաշտոնակատար Կևորկովը գրություն է ուղարկում ՌԽՖՍՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին կից Ներքին Առևտրի կոմիտե, որում նշում է, որ նրանց է ուղարկել 1923թ.-ի փետրվարի 10-ին Հայպետառից Հայառ վերանվանված հիմնարկության Կանոնադրությունը: Ըստ նրա՝ Կանոնադրությունը հաստատվել է ՀՍԽՀ տնտեսական խորհրդի կողմից 1923թ.-ի օգոստոսի 3-ին, բացի այդ, Հայառի գործունեության հիմքերի մասին Կոմիտեի հարցումը Հայառի Մոսկվայի գրասենյակն ուղարկել է Հայառի Վարչություն: Նշվում է նաև, որ Հայառի ռուսաստանյան գրասենյակների տնօրեն Ս.Տեր-Գաբրիելյանը տվյալ պահին գտնվում է Երևանում և Մոսկվա է վերադառնալու 1924թ.-ի հունվարի սկզբին: Ըստ Կևորկովի՝ Մոսկովյան գրասենյակին հայտնի է, որ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը հաստատման ներկայացնելու հարցը դրված է հերթի, և Ս.Տեր-Գաբրիելյանի՝ Մոսկվա վերադառնալուն պես բոլոր անհրաժեշտ քայլերը կձեռնարկվեն[611] :

Հայառի կառավարող խորհուրդը երկար քննարկումներից հետո վերջապես որոշում է լիազորագիր տալ Ս.Տեր-Գաբրիելյանին՝ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը ներկայացնելու համար: Բացի այդ Սահակ Տեր-Գաբրիելյանին իրավունք էր տրվում ինչպես Ներքին Առևտրի կոմիտեի պահանջով, այնպես էլ իր նախաձեռնությամբ Կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ, եթե դրանց անհրաժեշտությունը լինի [612]:

Շուտով Ս. Տեր-Գաբրիելյանը բանակցությունների մեջ է մտնում Ներքին Առևտրի կոմիտեի ղեկավարության հետ: Սրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ 1924թ.-ի մարտի 6-ին Մոսկվայի բաժանմունքի կառավարիչի տեղակալ Մուսաելյանը հեռագրում է Հայառի վարչությանը՝ խնդրելով իրենց ուղարկել Հայառի Կանոնադրության 20 օրինակ[613]: Մարտի17-ին նշված քանակությամբ օրինակներն ուղարկվում են Մոսկվա[614], իսկ մարտի 24-ին Մուսաելյանը հայտնում է Վարչությանը, որ օրինակները ստացվել են[615] :

Հայառի Վարչության կողմից Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը ներկայացնելու համար Ս. Տեր-Գաբրիելյանին լիազորագիր տալու անհրաժեշտության մասին խոսում է նաև Հայառի ռուսաստանյան գրասենյակի իրավաբան Տերյանը դեռևս 1923թ.-ի մայիսի 8-ին նույն Տեր-Գաբրիելյանին հղած նամակում, որում նշում էր, թե ՌԽՖՍՀ տարածքում Հայառի կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ բանակցություններ է վարել ՌԽՖՍՀ Ներքին Առևտրի կոմիտեի իրավաբանական բաժնի պետ Վոլֆի և Բաժնետիրական բաժնի պետ Տոնիգինի հետ: Ըստ Տերյանի՝ ծանոթանալով Հայառի Կանոնադրությանը, Վոլֆն ու Տոնիգինը եկել էին այն եզրակացության, որ Հայառն իրավունք չունի գործունեություն ծավալելու ՌԽՖՍՀ տարածքում, և այդ իրավունքը նրան կարող է տալ միայն ՌԽՖՍՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը, եթե Հայառի Կանոնադրությունը լիովին համապատասխանի ՌԽՖՍՀ Քաղաքացիական

[610] Տե՛ս նույն տեղը, թ.29:
[611] Տե՛ս նույն տեղը, թ. 36:
[612] Տե՛ս նույն տեղը, գ. 44, թ. 86:
[613] Տե՛ս նույն տեղը, գ. 29, թ. 64:
[614] Տե՛ս նույն տեղը, թ. 63:
[615] Տե՛ս նույն տեղը, թ.101:

օրենսգրքի 322-366 հոդվածներին: Հայառի Կանոնադրության հաստատման համար պարտադիր էր, որ Ներքին Առևտրի կոմիտեի միջոցով այն ներկայացվեր Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին, իսկ ներկայացնողները պետք է լինեին Հայառի բաժնետերերը: Կանոնադրության հաստատումն արագացնելու համար, ըստ Տերյանի, ցանկալի էր, որպեսզի Հայառի բաժնետերերը լիազորագիր տային Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին: «Նման լիազորագրի ստացման դեպքում, կարելի է հուսալ, որ Կանոնադրությունը կհաստատվի մոտ ժամանակներում, և ՌԽՖՍՀ-ում Հայառի բաժանմունքները հնարավորություն կստանան շարունակել ու զարգացնել իրենց գործունեությունը»[616] , - նշված է գրության վերջում:

Այդ նամակը ևս մեկ անգամ խոսում է այն մասին, որ տվյալ ժամանակաշրջանում Սահակ Տեր-Գաբրիելյանը Խորհրդային Ռուսաստանի ղեկավար օղակներում մեծ հեղինակություն էր, և ՌԽՖՍՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը անձամբ ներկայացնելը Խորհրդում վերջինիս հաստատման լուրջ գրավականն էր:

1924թ.-ի հունվարին Սահակ Տեր-Գաբրիելյանը 1923թ.-ի փետրվարից մինչև 1924թ.-ի հունվարի 1-ը Հայառի ռուսաստանյան բաժանմունքների գործունեության մասին զեկույց է ներկայացնում: Ըստ նրա՝ Հայառի հիմնական նպատակն էր իրացնել ՀՍԽՀ-ում արտադրված ապրանքները, պետական պատվերներով ու սեփական միջոցների հաշվին իրականացնել բոլոր տեսակի ներմուծման ու արտահանման, ապրանքափոխանակության գործառույթներ, ինչպես նաև միավորել ՀՍԽՀ բոլոր ժողկոմատների առևտրական և մթերման բնույթի գործունեությունը: Հայառը, ըստ Տեր-Գաբրիելյանի, գտնվում էր Երևանում, և իր գործունեության զարգացման համար Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքներում և Անդրֆեդերացիայի բոլոր խոշոր քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում ու Բաթումում, բացել էր գրասենյակներ: Բացի այդ, նույն նպատակով ՌԽՖՍՀ-ի հետ ավելի սերտ ու գործնական կապի համար բաժանմունքներ էին բացվել Մոսկվայում, Լենինգրադում, Ռոստովում, ինչպես նաև գործակալություն էր բացվել Արմավիրում (վերջինս հիմնականում զբաղվում էր հացահատիկի ու ձեթի մատակարարման հարցերով): ՌԽՖՍՀ այդ գրասենյակները միավորվել էին Հայառի ռուսաստանյան գլխավոր գրասենյակի կողմից, որը գտնվում էր Մոսկվայում: Այդ գործունեությունը գրասենյակի վրա էր դրվել 1923թ.-ի հուլիսի 1-ից, երբ լուծարվել էր Հայկական ԽՍՀ Տնտեսական խորհրդի ներկայացուցչությունը Մոսկվայում: Վերջինս ակտիվ կերպով համագործակցում էր տարբեր երկրներում գործող ԽՍՀՄ թե՛ դիվանագիտական, թե՛ տնտեսական ներկայացուցչությունների հետ՝ արտասահմանում նրանց օգնությամբ հայկական արտադրության ապրանքները վաճառելու և այնտեղից հանրապետության պետական, կոոպերատիվ հիմարկությունների համար անհրաժեշտ ապրանքներ ներկրելու նպատակով:

1924թ.-ի հուլիսի 10-ին Գերմանիայում ԽՍՀՄ Տնտեսական ներկայացուցչության Ինֆորմացիոն բաժնի ղեկավար Նիկ Սուխանովը գրություն է ուղարկում Հայառի Մոսկովյան բաժանմունքին և հայտնում, որ սեպտեմբերի 7-ին Վիեննայում տեղի է ունենալու Միջազգային Աշնանային ցուցահանդես, որին ներկա էին լինելու գնորդներ Հունգարիայից, Հարավսլավիայից, Չեխոսլովակիայից, Իտալիայից, ինչպես նաև Բուլղարիայից, Ռումինիայից և այլն: Այդ երկրների հետ առևտրական կապերի հաստատման նպատակով Ավստրիայում ԽՍՀՄ Տնտեսական ներկայացուցչությունը կազմակերպել էր այդ ցուցահանդեսին ԽՍՀՄ մասնակցությունը: Այցելուներին Խորհրդային Միության տնտեսությանը ծանոթացնելու համար Գերմանիայում ու Ավստրիայում ԽՍՀՄ Տնտեսական ներկայացուցչությունը որոշել էր լույս ընծայել գերմաներեն լեզվով տեղեկատու:

[616] Նույն տեղը, գ. 29, թ. 34:

Գրության մեջ խնդրվում էր մինչև հուլիսի 20-ն իրենց ներկայացնել Խորհրդային Հայաստանի տնտեսության մասին հայկական կողմի տեղեկանքի տեքստը[617]:

Նույն հուլիս ամսին ՀՍԽՀ Ժողկոմխորհի ներսում խմորումներ էին սկսվել, և ՆԷՊ-ի քաղաքականության փոփոխությունից հետո դրվել էր նաև Մոսկվյան գրասենյակի փակման հարցը: Հասկանալով այդ քայլի վնասակար ու աղետալի լինելը ՀՍԽՀ-ի և, առաջին հերթին, հենց Հայառի համար՝ Ս. Տեր-Գաբրիելյանը որոշում է դիմել ՀՍԽՀ Ներքին Առևտրի ժողկոմատին՝ հորդորելով զերծ մնալ այդ քայլից:

Այդ գերատեսչությանը հղած նամակում Ս.Տեր-Գաբրիելյանը նշում էր, որ Հայառի հիմնական նպատակն է Անդրկովկասի սահմաններից դուրս Հայաստանի արտադրած ապրանքների իրացումը և բոլոր անհրաժեշտ ապրանքներով երկիրն ապահովելը: Ըստ Տեր-Գաբրիելյանի, քանի որ Հայաստանը երբեք չէր ունեցել զարգացած արդյունաբերություն, Հայառի հիմնական խնդիրն էր երկրի արդյունաբերության զարգացումը: Այդ ամենը պահանջել էր մեծ ծախսեր, և գումար վաստակելու միջոց էր հանդիսացել նաև առևտուրը: Առևտրի լրիվ վերացումը կարող էր մեծ կորուստների պատճառ դառնալ, և Հայառի գործունեությունը Մոսկվայում դնել մեծ հարցականի տակ: Ս.Տեր-Գաբրիելյանի կարծիքով՝ այն հանգամանքը, որ Հայառը Հայաստանի միակ առևտրային կազմակերպությունն է, և Մոսկվայում դրա իրականացրած առևտուրն ազդում էր ամբողջ Հայաստանի տնտեսական դրության վրա, բերում է համոզման, որ տեղական առևտրի գոյությունն անհրաժեշտություն էր: Ստեղծված վիճակից դուրս գալու ամենից նպատակահարմար ճանապարհը Մոսկվյան բաժանմունքի առևտրային գործունեության շարունակումն էր: Բացի այդ, Մոսկվյան բաժանմունքի գործունեությունը չէր կարող վնասակար լինել, քանի որ Հայառը պետական հիմարկություն էր:

«Վերը նշված այս ամենը դրդում է խնդրել Ներքին Առևտրի ժողկոմատին՝ հատուկ ուշադրությամբ և քնքշությամբ վերաբերվել մինչ այժմ ճնշված ազգի աշխատավոր մասսաների պահանջներին և չխանգարել Մոսկվյան գրասենյակի առևտրային գործունեությանը»[618] , - նշված էր նամակի վերջում:

Թե ինչ պատասխան է տվել Ներքին Առևտրի ժողկոմատը Ս.Տեր-Գաբրիելյանին, արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ պարզել չհաջողվեց:

Երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ նաև ապրանքաշրջանառությունը, որը հիմնականում իրականացվում էր երկաթուղու միջոցով: Քանի որ Խորհրդային Հայաստանը ՌԽՖՍՀ-ի հետ անմիջական ցամաքային սահման չուներ, ապրանքաշրջանառությունը իրականացվում էր միջնորդավորված կերպով՝ Վրաստանի տարածքով և հյուսիսկովկասյան Դերբենդ երկաթուղային կայարանի միջոցով:

1925-1926թթ.-ին Դերբենդ կայարանի վրայով Ռուսաստան է արտահանվել ավելի քան 3400 տոննա բամբակ, գրեթե 60 տոննա մրգեղեն, ձմերուկ, սեխ ու ընկույզ, մոտ 40 տոննա բուրդ ու մորթի, 5568 տոննա գինի, 1059 տոննա օղի և այլ ոգելից խմիչքներ, 408 տոննա մաքուր երկաթ և 1 տոննա մանուֆակտուրա: Նույն ժամանակահատվածում հակառակ ուղղությամբ Հայաստան է ներկրվել մոտ 25.000 տոննա ցորեն ու ալյուր, 2.300 տոննա գարի ու վարսակ, 66 տոննա խոշոր եղջերավոր անասուն[619], մոտ 15.000 տոննա քարածուխ, 6.000 տոննա շինանյութ ու անտառանյութ, մոտ 5.300 տոննա շաքար [620]: Այս թվերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես 1921-1922թթ.-ին, այնպես էլ հետո Հայաստանից արտահանվում էր հիմնա-

[617] Տե՛ս նույն տեղը, գ.117, թ. 81:

[618] Նույն տեղը, գ.122, թ. 21-22 (շրջերես):

[619] Խոշոր եղջերավոր անասունների մեկ գլխի միջին քաշն ընդունված էր 246 կգ, մանր եղջերավորներինը՝ 33 կգ.:

[620] Խորհրդային Հայաստանը թվերով 1923-1927թթ., վիճակագրական տեղեկատու, Թիֆլիս, 1928, էջ 252:

կանում հումք, գյուղատնտեսական ապրանքներ ու ոգելից խմիչքներ: Խորհրդային Ռուսաստանից հիմնականում ներմուծվում էր հացահատիկ, քանի որ ՀՍԽՀ-ն դեռևս չէր կարող իրեն բավարարել տեղում աճեցված ցորենով և այլ հացամթերքներով, քարածուխ, որը նավթին զուգահեռ օգտագործվում էր երկրում առկա սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունները աշխատեցնելու, ինչպես նաև երկաթուղու անխափան աշխատանքն ապահովելու համար: Շարունակվում էր նաև խոշոր եղջերավոր անասունների ներկրումը՝ տեղում անասնապահության զարգացման համար, ինչն իր հերթին կարող էր խթանել գյուղի ընդհանուր զարգացումը:

1926 և 1927թթ.-ին նույնպես Հայաստանը մեծ մասամբ շարունակում էր Ռուսաստանից ներկրել առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ մանուֆակտուրա, շինանյութ, քարածուխ, հացահատիկ, ինչպես նաև շարունակվում էր խոշոր եղջերավոր անասունների ներկրումը: Համեմատության համար պետք է ասել, որ, ի տարբերություն 1925թ.-ի, 1926 և 1927թթ.-ին ներմուծման ծավալները ավելանում են: Այսպես, եթե 1925-1926թթ.-ին ներկրվել էր 66 տոննա, ապա 1926-1927թթ.-ի առաջին կիսամյակում ներկրվում է 196 տոննա, իսկ երկրորդ կիսամյակում՝ արդեն 709 տոննա խոշոր եղջերավոր անասուն: Սա խոսում է այն մասին, որ երկիրը զարգացման միտում ուներ և ավելի ու ավելի շատ էր զգում ինչպես խոշոր եղջերավոր անասունների, այնպես էլ շինանյութի ու մանուֆակտուրայի կարիք, որոնց ներկրման ծավալները 1926-1927թթ.-ին նախորդ տարվա համեմատությամբ աճեցին համապատասխանաբար՝ 110 և 100 տոննայով: Իսկ ինչ վերաբերում է հացահատիկին, ապա ընդամենը մեկ տարվա ընթացքում ներմուծման ծավալները նվազեցին մոտ 5.000 տոննայով, չնայած չեղավ նաև արտահանում: Սա նշանակում էր, որ մոտ 60%-ի չափով հանրապետությունը կարողանում էր բավարարել երկրում հացահատիկի պահանջը[621]:

Սակայն այս վերջին՝ հացահատիկի հետ կապված հարցի վերաբերյալ այլ բան էր ասվում 1927թ.-ի օգոստոսի 13-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Համբարձումյանի՝ Սահակ ՏերԳաբրիելյանին հղված հեռագրում: Այնտեղ նշվում էր, որ նրա՝ որպես ՌԽՖՍՀ-ում Անդրֆեդերացիայի ներկայացուցչի կատարած միջամտությունից հետո հունիսին Հայաստանը ստացել էր 30 վագոն 3-րդ կարգի ցորեն: Այդ ընթացքում հիմնական ներկրող կազմակերպությունների կողմից ալյուր ընդհանրապես չէր ներկրվել: Այլ կարգի ալյուրից ներկրվել էր չնչին քանակություն, ինչի պատճառով ամբողջ հանրապետությունում ալյուրի մատակարարման ճգնաժամը խորանում էր ամեն օր: Համբարձումյանը նշում էր, որ իրենց բոլոր ջանքերն ու խնդրանքները՝ ուղղված Անդրկովկասի առժողկոմին, ոչ մի արդյունք չէին տվել: Համբարձումյանի խոսքով՝ շրջաններից հայտնում էին, որ հացն իսպառ բացակայում է: «Հաշվի առնելով վիճակի լրջությունը, խնդրում ենք Ձեր ակտիվ միջամտությունը՝ Հայաստան ուղարկելու 100 վագոն ալյուր՝ առանց տարբերելու տեսակները, հակառակ դեպքում նույնիսկ մի մասը ցորեն կամ տարեկանի ալյուր»[622] , - գրված էր հեռագրում: Հեռագրից պարզ երևում է, որ 1927թ.-ին Հայաստանում հացահատիկի հետ կապված վիճակն անտանելի էր, և երկրի իշխանությունները ամեն ջանք գործադրում էին՝ երկիրը վերահաս սովից փրկելու համար: Բացի այդ, համեմատելով տեղեկագրում նշված պաշտոնական վիճակագրական տվյալները երկրում առկա իրական վիճակի հետ՝ պարզ է դառնում, որ հաճախ պաշտոնական թվերը չէին համապատասխանում իրականությանը:

Ամփոփելով նշենք, որ չնայած բազմաթիվ դժվարություններին՝ Խորհրդային Ռուսաստանում Հայառի բաժանմունքները մեծ աշխատանք կատարեցին ՀՍԽՀ-ն առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար, և այդ գործում մեծ էր նաև Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի դերը:

---

[621] Տե՛ս նույն տեղը:
[622] ՀԱԱ, ֆ. 113, ց. 2, գ.1164, թ.1:

FROM THE HISTORY OF ARMENTRADE BRANCHS' ACTIVITIES IN SOVIET RUSSIA 1923-1927YY

GRIGOR BALASANYAN
Member of UYSSA, Yerevan State University,
PhD, Associate Professor of the Chair of International Relations and Diplomacy,
Yerevan, Republic of Armenia

Trade-economic relations with Soviet Russia greatly influenced the development of the Armenian Soviet Socialist Republic (hereinafter referred to as the SSRA), which, in its turn, had a positive impact on improving the social-economic situation of the country. The study of archival documents suggests that trade relations between Soviet Armenia and the Soviet Federative Socialist Republic of Russia (hereinafter referred to as the RSFSR) were more active than the other Soviet republics. The research shows that the efforts of the Armenian authorities in the period under investigation aimed at the development of Armenian-Russian trade-economic relations mostly were successful. The ArmTrade played a great role in developing the Armenian-Russian trade-econimic relations, its branches did their best to provide Armenia with the corn and other products needed. In this case, Mr. Sahak Ter-Gabrielyan, the Plenipotentiary Representative of Soviet Armenia in the RSFSR, had a great influence on the Russian government and greatly helped to solve this issue in a prompt manner.

Key words: *ArmSSR, RSFSR, Moscow, Sahak Ter-Gabrielyan, ArmTrade, trade-economic relations, branch, corn.*

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ОТДЕЛЕНИЙ АРМЕНТОРГА В СОВЕТСКОЙ РОССИИ (1923-1927 ГГ.)

ГРИГОР БАЛАСАНЯН
Член ОМУСА, Кандидат исторических наук, доцент кафедры
международных отношений и дипломатии ЕГУ,
г. Ереван, Республика Армения

Торгово-экономические отношения с Советской Россией во многом способствовали развитию экономики Армянской Советской Социалистической Республики, что в свою очередь имело положительное влияние на улучшение социально-экономического положения населения республики. Исследование архивных документов показывает, что среди советских республик особо активными были торговые отношения Советской Армении с Российской Советской Федеративной Социалистической Республикой. В данный период усилия властей Советской Армении, направленные на развитие армяно-российских торгово-экономических отношений, в основном увенчались успехом. В этом деле свою особую роль имел Арменторг, чьи отделения по всей территории Советской России работали не покладая рук для обеспечения Армении пшеницей и другими товарами первой необходимости. Также был активен полномочный представитель Республики Армения в РСФСР Саак Тер-Габриелян, который имел большой авторитет среди правящих кругов России, что помогало опративному решению того или иного вопроса.

Ключевые слова: *АрмССР, РСФСР, Москва, Саак Тер-Габриелян, Арменторг, торгово-экономические отношения, отделение, пшеница.*